01/10.1/160-11

2011-01-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արմեն Մարտիրոսյանի, Ստյոպա Սաֆարյանի, Անահիտ Բախշյանի և Զարուհի Փոստանջյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Անհատական տվյալների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

Մինչև «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) ընդունումը՝ դրա արդյունքում առաջացող սոցիալ-տնտեսական ազդեցությունը ենթարկվել է բազմակողմանի վերլուծության: Վերլուծություն իրականացնելիս հաշվի են առնվել, մասնավորապես, վերջին տարիների ճանապարհատրանսպորտային պատահարների ցուցանիշների կայուն աճը՝ տարեկան մոտավորապես 15 տոկոսի չափով, երկրի տնտեսական վիճակը, տնտեսական աճը, ինչպես նաև հասարակության առջև ծառացած և օրենքով լուծվող արդի սոցիալ-տնտեսական խնդիրները:

Օրենքի նախագծի շրջանառության ընթացքում բոլոր շահագրգիռ անձանց հետ իրականացվել են ԱՊՊԱ-ի համակարգի ներդրման շուրջ բավական երկարատև և բուռն քննարկումներ՝ և՛ Հայաստանի Հանրապետության կառավարությունում, և՛ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում: Կազմակերպվել են խորհրդարանական լսումներ, որոնցում ներգրավված են եղել նաև այս ոլորտի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, մասնավորապես, սպառողների, ավտովարորդների շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների և այլնի ներկայացուցիչներ: Միայն այդ երկարատև քննարկումների արդյունքում 2010 թվականի մայիսին օրենքն ընդունվեց Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից: Օրենքը հետապնդում է հետևյալ նպատակները՝

1) ապահովել ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից տուժած անձանց հատուցում վճարելու մեխանիզմների պարզեցման և արդյունավետության բարձրացումը տուժողների համար.

2) երաշխավորել տուժած անձանց գույքային վնասների հատուցումը և առողջության վերականգնումը, տուժողների մահվան դեպքում նրանց իրավահաջորդներին փոխհատուցման տրամադրումը.

3) ստեղծել ապահովագրական շուկայի մի շարք կարևորագույն ենթակառուցվածքներ, որոնք կապահովեն ԱՊՊԱ-ի համակարգի շարունակականությունը և անընդհատությունը, ինչպես նաև օրենքով ամրագրված խնդիրների լուծումը:

ԱՊՊԱ-ի համակարգի անհրաժեշտությունը բխում է պատասխանատվության ապահովագրության մի շարք առանձնահատկություններից: Ի տարբերություն գույքային կամ անձնական ապահովագրության՝ պատասխանատվության ապահովագրությունն ապահովում է այլ՝ երրորդ անձանց պատճառված վնասների հատուցման արդյունավետ մեխանիզմներ: Երրորդ անձանց հանդեպ պատասխանատվության ապահովագրության դեպքում ձևավորվում են եռակողմ հարաբերություններ ապահովադրի, ապահովագրական ընկերության և տուժողի միջև: Պատճառված վնասի համար հատուցում ստանալու՝ տուժողի իրավունքի պաշտպանության նպատակով պետությունը

միջամտում է այս հարաբերություններին՝ օրենսդրական պարտադրանքի միջոցով կարգավորելով պայմանագրային հարաբերությունները:

Ըստ էության, երրորդ անձանց հանդեպ պատասխանատվության ապահովագրությունը պարտադիր դարձնելով՝ պետությունը լուծում է մի շարք սոցիալական և տնտեսական խնդիրներ, մասնավորապես՝

1) օրենքով երաշխավորվում է տուժողին (նրա ժառանգներին, ներկայացուցիչներին) ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում պատճառված անձնական և գույքային վնասների ֆինանսական հատուցումը.

2) լուծում է վնաս պատճառողների վճարունակության խնդիրը՝ վնաս պատճառելու դեպքում խոշոր, անկանխատեսելի ծախսերը փոխարինելով փոքր, որոշակի և պարբերական վճարներով.

3) օրենքով ստեղծվել են ԱՊՊԱ-ի համակարգի արդյունավետ գործունեությունն ապահովող ենթակառուցվածքներ, մասնավորապես՝

ա. բյուրո, որի հիմնական նպատակն է լինելու ԱՊՊԱ իրականացնող ապահովագրական ընկերությունների կարգավորումը՝ ինքնակարգավորման սկզբունքով, ճանապարհատրանսպորտային պատահարների արդյունքում տուժած անձանց շահերի պաշտպանությունը և ԱՊՊԱ-ի համակարգի արդյունավետ գործունեությունը,

բ. երաշխավորման ֆոնդ, որի դերը լինելու է որոշակի դեպքերում (երբ վնաս պատճառած անձը չի կարող նույնականացվել) տուժողներին վճարվելիք ապահովագրական հատուցումների երաշխավորումը,

գ. տեղեկատվական համակարգ, որն ԱՊՊԱ-ի համակարգի բնականոն գործունեությունը երաշխավորելու համար ապահովում է անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը, մշակումը և տրամադրումը ԱՊՊԱ իրականացնող ապահովագրական ընկերություններին:

ԱՊՊԱ-ի համակարգի կիրառումն ու զարգացումը թույլ կտան Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ բարձրացնել ֆինանսական միջնորդության մակարդակը, ինչը երկարաժամկետ հատվածում երկրի կայուն տնտեսական աճի հիմնարար բաղադրիչներից է: Հայաստանում ապահովագրական գործունեության զարգացման խնդիրներն առանձնակի հրատապություն են ստանում տնտեսական աճի ֆինանսավորման աղբյուրները տարատեսակ դարձնելու, ֆինանսական շուկայի ոչ բանկային հատվածն ընդլայնելու համատեքստում:

Ներկայացված նախագծերի ընդունման հիմնավորման մեջ նշվում է, որ համակարգի ներդրումը չի նպաստում սոցիալական արդարությանը և հասարակության բևեռացման վերացմանը: Նշենք, որ, համաձայն հաստատված ԱՊՊԱ-ի ոլորտում կիրառվող ապահովագրավճարների, մարդատար ավտոմեքենաների համար կիրառվում են տարեկան նվազագույնը 25000 դրամ (ամսական՝ 2083 դրամ) և առավելագույնը 109000 դրամ (ամսական՝ 9083 դրամ) ապահովագրավճարներ: Հաստատված ապահովագրավճարի չափն ուղղակիորեն կապ ունի շահագործվող ավտոմեքենայի

շարժիչի հզորության հետ, իսկ հզոր շարժիչ ունեցող ավտոմեքենաների գերակշիռ մասը թանկարժեք ավտոմեքենաներ են:

Համաձայն կից հիմնավորման՝ համակարգը չի բխում հասարակության շահերից: Մեր ներկայացրած նախորդ դիտարկումները հաստատում են համակարգի ներդրման անհրաժեշտությունը:

Հիմնավորման մեջ նշվում է նաև, որ օրենքը չի բխում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից: Մինչդեռ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.3-րդ հոդվածի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետերով սահմանված է, որ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները: Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ ԱՊՊԱ-ի համակարգը ներդրվել է օրենքով՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պահանջներին համապատասխան:

Հարկ ենք համարում նշել նաև, որ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը բխում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 983-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջից, որի համաձայն պարտադիր ապահովագրությունն ապահովադրի կամքից անկախ ապահովագրողի հետ օրենքի ուժով ծագող հարաբերություններն են, որի տեսակները, պայմաններն ու իրականացման կարգը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և պարտադիր ապահովագրության մասին համապատասխան օրենքներով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վաչե Գաբրիելյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-1041-01.12.2010-ՖՎ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը ուժը կորցրած ճանաչելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. Ուժը կորցրած ճանաչել «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի մայիսի 5-ի ՀՕ-63-Ն օրենքը:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-1041[1]-01.12.2010-ՖՎ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Անհատական տվյալների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. «Անհատական տվյալների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հոկտեմբերի 8-ի ՀՕ-422-Ն օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի «օրենքով» բառից հետո հանել «եւ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով» բառերը:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-1041[2]-01.12.2010-ՖՎ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-233-Ն օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի «ներկայացումը» բառից հետո «եւ օրենքով սահմանված կարգով դրանց օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրությունը» բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-1041[3]-01.12.2010-ՖՎ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. «Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի «ժը» ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«ժը. իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ»:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-1041[4]-01.12.2010-ՖՎ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հուլիսի 6-ի մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 14-րդ հոդվածի 2-րդ մասի «մաքսային գործի» բառերից հետո «եվ օրենքով եւ այլ իրավական ակտերով իրենց վերապահված այլ լիազորությունների» բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի «բանկային» բառից հետո «ապահովագրական» բառը հանել:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի «բանկային» բառից հետո «ապահովագրական» բառը հանել:

ՀՈԴՎԱԾ 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-1041[5]-01.12.2010-ՖՎ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-221 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 43-րդ հոդվածի ՝

1. 6-րդ մասի «(փայի)» բառից հետո «, ինչպես նաեւ պարտապանին պատկանող պայմանագրային ներդրումային ֆոնդի փայի (փայերի)» բառերը հանել:

2. 8-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

ՀՈԴՎԱԾ 2. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 44-րդ հոդվածի 6-րդ մասը:

ՀՈԴՎԱԾ 3. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 47.1-րդ հոդվածի 3-րդ մասը:

ՀՈԴՎԱԾ 4. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 47.2-րդ հոդվածը:

ՀՈԴՎԱԾ 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-1041[6]-01.12.2010-ՖՎ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հունիսի 17-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասից «ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ֆոնդի կառավարչի ստանձնած պարտավորությունների խախտման համար դրամական միջոցներ գանձելու վերաբերյալ հայցը բավարարելու դեպքում դատարանը վճռի եզրափակիչ մասում սահմանում է նաեւ, թե բռնագանձվող գումարը ենթակա է գանձման միայն համապատասխան ֆոնդի գույքից, թե՝ միայն պարտապան ֆոնդի կառավարչի՝ ֆոնդի միջոցներ չհամարվող գույքից, թե՝ համապատասխան ֆոնդի գույքից, իսկ դրա անբավարարության դեպքում՝ նաեւ պարտապան ֆոնդի կառավարչի՝ ֆոնդի միջոցներ չհամարվող գույքից:» բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-1041[7]-01.12.2010-ՖՎ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. Ուժը կորցրած ճանաչել «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի սեպտեմբերի 30-ին ՀՕ-155 օրենքի 36.4-րդ հոդվածը:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-1041[8]-01.12.2010-ՖՎ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. «Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենքի) 3-րդ հոդվածի 26-րդ եւ 27-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել:

ՀՈԴՎԱԾ 2. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 58-րդ հոդվածի

1. 2-րդ մասի «ապահովագրության» բառից հետո «ձեւերի, » բառը հանել:

2.3-րդ մասի «, ինչպես նաեւ սույն օրենքով կամ այլ օրենքներով» բառերը փոխարինել «եւ օրենքով» բառով:

ՀՈԴՎԱԾ 4. Օրենքի

1. 81-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

2. 87-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել «իրավաբանական անձը, անհատ ձեռնարկատերը կամ Ընկերության հետ աշխատանքային պայմանագիր կնքած ֆիզիկական» բառերով:

ՀՈԴՎԱԾ 5. Օրենքի 108-րդ հոդվածի 1-ին մասի «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձին» եւ «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձի» բառերից հետո համապատասխանաբար «կամ Բյուրոյին» եւ «կամ Բյուրոյի» բառերը հանել, իսկ 2-րդ մասի «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձի» բառից հետո համապատասխանաբար «Բյուրոյի» բառը հանել:

ՀՈԴՎԱԾ 6. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 108-րդ հոդվածի 2.1-րդ մասը:

ՀՈԴՎԱԾ 7. Օրենքի 108-րդ հոդվածի 3-րդ մասի «իր հաճախորդից» բառից հետո «,ինչպես նաեւ Բյուրոյից» բառը հանել:

ՀՈԴՎԱԾ 8. Օրենքի 110-րդ հոդվածի 1-3-րդ մասերի «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձը», «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձի», «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձին», «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձիք» բառերից հետո համապատասխանաբար «եւ Բյուրոն», «եվ Բյուրոյի», «եւ Բյուրոյին» բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 9. Օրենքի 110-րդ հոդվածի 4-րդ մասի «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձը» բառից հետո՝ «եվ Բյուրոն» բառը, իսկ «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձի» բառերից հետո «Բյուրոյի» բառը հանել:

ՀՈԴՎԱԾ 10. Օրենքի 111-րդ հոդվածի 2-րդ մասի «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձի» բառերից հետո՝ «Բյուրոյի,» բառը, եվ «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձանց» բառերից հետո՝ «եվ Բյուրոյի» բառերը, իսկ «վերջիններիս հաճախորդների» բառերից հետո «(Բյուրոյի անդամների հաճախորդների)» բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 11. Օրենքի 112-րդ հոդվածի «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձն», «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձը», «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձին», «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձի» բառերից հետո՝ համապատասխանաբար «եւ Բյուրոն», «եվ Բյուրոյին», «եւ Բյուրոյի» բառերը, իսկ «իր հաճախորդներին» բառերից հետո «(Բյուրոյի դեպքում՝ իր անդամների հաճախորդներին)» բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 12. Օրենքի 113-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի «հաճախորդների» բառից հետո «եվ Բյուրոն՝ իր անդամների հաճախորդների» բառերը հանել:

2. 2-րդ մասի 1-ին պարբերության «պահովագրական միջնորդություն իրականացնող անձը» բառերից հետո «եւ Բյուրոն» բառերը հանել:

3. 2-րդ մասի 2-րդ պարբերության «հաճախորդներին» բառից հետո «եվ Բյուրոյին՝ իր անդամների հաճախորդներին» բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 13. Օրենքի 114-րդ հոդվածի 1-ին մասի «հաճախորդների» բառից հետո՝ «եւ Բյուրոն՝ իր անդամների հաճախորդների» բառերը, իսկ 2-րդ եւ 3-րդ մասերի «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձը» եւ «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձի» բառերից հետո՝ համապատասխանաբար «կամ Բյուրոն» եւ «կամ Բյուրոյի» բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 14. Օրենքի 115-րդ հոդվածի «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձն իր հաճախորդների» բառերից հետո «եւ Բյուրոն իր անդամների հաճախորդների» բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 15. Օրենքի 117-րդ հոդվածում

1. վերնագիրը «ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴՆԵՐԻ» բառերից հետո «, ԲՅՈՒՐՈՅԻ» բառը հանել:

2. 1-ին մասի «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձիք» բառերից հետո «եւ Բյուրոն» բառերը, իսկ «հաճախորդների» բառից հետո «(Բյուրոն իր անդամների հաճախորդների)» բառերը հանել:

3. 2-րդ մասի «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձիք», «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձանց» բառերից հետո՝ «եւ Բյուրոյի» բառերը, իսկ «հաճախորդների» բառից հետո՝ «(Բյուրոյին անդամների հաճախորդների)» բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 16. Օրենքի 118-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձն» բառերից հետո՝ «եւ Բյուրոն» բառերը, «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձի» բառերից հետո «կամ Բյուրոյի» բառերը, իսկ « իրենց հաճախորդի» բառերից հետո «, իսկ Բյուրոն՝ իր անդամների հաճախորդների» բառերը հանել:

2. 2-րդ մասի «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձն» բառից հետո «եւ Բյուրոն» բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 17. Օրենքի 119-րդ հոդվածի «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձը» բառերից հետո «եւ Բյուրոն» բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 18. Օրենքի 120-րդ հոդվածի 1-ին մասի «ապահովագրական միջնորդություն իրականացնող անձանց» բառերից հետո «եւ Բյուրոյի» բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 19. Օրենքի

1. 122-րդ հոդվածի 3-րդ մասի «վերաապահովագրական ընկերությունների» բառերից հետո «եւ Բյուրոյի» բառերը հանել:

2. Ուժը կորցրած ճանաչել 123-րդ հոդվածի 1-ին մասի «ԱՊՊԱ-ի վերաբերյալ պորտֆելը կարող է փոխանցվել միայն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի համաձայն ԱՊՊԱ իրականացնելու իրավունք ունեցող ապահովագրական ընկերությանը:»:

3. Ուժը կորցրած ճանաչել 126-րդ հոդվածի 2-րդ մասի 4.1 կետը:

ՀՈԴՎԱԾ 20. Օրենքի 153-րդ հոդվածի «նպատակով» բառից հետո՝ «ինչպես նաեւ ԱՊՊԱ իրականացնելու համար» բառերը, «կարող է» բառից հետո՝ «լրացուցիչ պահանջներ», «վերահսկվողի» բառից հետո «կամ նրա» բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 21. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-1041[9]-01.12.2010-ՖՎ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-69 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածի «ժա» կետի «բանկերի» բառից հետո «, իսկ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող

պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաեւ Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնող ապահովագրական ընկերությունների Բյուրոյի (այսուհետեւ Բյուրո)» բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 2. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 38.1-րդ հոդվածը:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 39.1-րդ հոդվածում

1. 1-ին մասի «այլ անձանց» բառերից հետո «եւ Բյուրոյի» բառերը հանել:

2. 5-րդ մասի «վերաապահովագրական ընկերություններում» բառերից հետո «, ինչպես նաեւ Բյուրոյում» բառերը հանել:

3. 6-րդ մասի «վերապահովագրական ընկերություններում» բառերից հետո «Բյուրոյում, » բառը հանել:

4. 7-րդ մասի «վերապահովագրական ընկերությունում» բառերից հետո «Բյուրո» բառը հանել:

ՀՈԴՎԱԾ 4. Օրենքի 39.5-րդ հոդվածի 6-րդ մասի «վերապահովագրական ընկերության», «վերապահովագրական ընկերությունը», «վերապահովագրական ընկերությունում» բառերից հետո համապատասխանաբար «, Բյուրոյի», «, Բյուրոն» եւ «Բյուրոյում» բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 5. Օրենքի 39.10-րդ հոդվածում

1. Վերնագիրը «ՎԵՐԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ» բառերից հետո «, ԲՅՈՒՐՈՅԻ» բառը հանել:

2. 1-ին, 1-րդ մասերի եւ 3րդ մասի «ը» ենթակետի «վերապահովագրական ընկերության» բառերից հետո «, Բյուրոյի» բառը հանել:

3. 3-րդ մասի «հետեւյալ պայմանները՝» բառերից հետո՝ «(կիրառելիության դեպքում)» բառերը եւ «ը» ենթակետի «վերապահովագրական ընկերության» բառերից հետո «Բյուրոյի» բառը հանել:

ՀՈԴՎԱԾ 6. Օրենքի 39.12-րդ հոդվածում՝

1. 3-րդ մասի «վերապահովագրական ընկերությունը» եւ «վերապահովագրական ընկերության» բառերից հետո համապատասխանաբար «, Բյուրոն» եւ «Բյուրոյի» բառերը հանել:

2. 4-րդ մասի «, Բյուրոյի» բառը հանել:

ՀՈԴՎԱԾ 7. Օրենքի 39.13-րդ հոդվածի «, Բյուրոյի» բառը հանել:

ՀՈԴՎԱԾ 8. Օրենքի 39.14-րդ հոդվածի «, Բյուրոյի» բառը հանել:

ՀՈԴՎԱԾ 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-1041[10]-01.12.2010-ՖՎ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-169 օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի «ապահովագրական ընկերությունների» բառերից հետո «, վերապահովագրական ընկերությունների եւ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնող ապահովագրական ընկերությունների Բյուրոյի» բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-1041[11]-01.12.2010-ՖՎ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. Ուժը կորցրած ճանաչել «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ կետը:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-1041[12]-01.12.2010-ՖՎ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ին քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 60-րդ հոդվածի 1-ին մասի «գույքով» բառից հետո «, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի» բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենսգրքի 67-րդ հոդվածի 6-րդ մասի «, ապահովագրական ընկերությունների եւ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր

ապահովագրության մասին» ՀՀ օրենքի համաձայն ստեղծված Բյուրոյի» բառերը փոխարինել «եւ ապահովագրական ընկերությունների» բառերով:

ՀՈԴՎԱԾ 3. Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 189-րդ հոդվածի 6-րդ կետը:

ՀՈԴՎԱԾ 4. Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 52.1-րդ գլուխը:

ՀՈԴՎԱԾ 5. Օրենսգրքի

1. 1003.1-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ. «օրենքով նախատեսված այլ դեպքերում:»:

2. 1021.1 հոդվածի

ա) 5-րդ մասի «վնասը» բառից հետո «՝ բացառությամբ այն վնասների, որոնք ենթակա չեն ապահովագրական ընկերության կողմից հատուցման» բառերը հանել:

բ) 6-րդ մասի «եթե» բառից հետո « օրենքով կամ» բառերը հանել:

1025-րդ հոդվածի վերջին երկու պարբերությունները ուժը կորցրած ճանաչել:

3. 1066-րդ հոդվածը լրացնել «(հոդված 987, 991 հոդվածի 1-ին կետ)»բառերով:

ՀՈԴՎԱԾ 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-1041[13]-01.12.2010-ՖՎ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. Ուժը կորցրած ճանաչել «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-51-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերը:

ՀՈԴՎԱԾ 2. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասը:

ՀՈԴՎԱԾ 3. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 82-րդ հոդվածի 5-րդ մասը:

ՀՈԴՎԱԾ 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-1041[14]-01.12.2010-ՖՎ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 123-րդ հոդվածի «լողամիջոցները» բառից հետո «, իսկ սույն օրենսգրքի 129.1-րդ եւ 129.2-րդ հոդվածներում՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով նախատեսված տրանսպորտային միջոցները» բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 2. Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 129.1-րդ հոդվածը:

ՀՈԴՎԱԾ 3. Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 129.2-րդ հոդվածը:

ՀՈԴՎԱԾ 4. Օրենսգրքի 305-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ պարբերություններում «129.2» թիվը փոխարինել «129» թվով:

ՀՈԴՎԱԾ 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում առկա ֆինանսա-տնտեսական իրավիճակը բացասական անդրադարձ ունի բնակչության կենսամակարդակի վրա, որը չի նպաստում սոցիալական արդարության եւ հասարակության բեւեռացման վերացման: Գնաճային գործընթացներին դժվարությամբ դիմակայող քաղաքացիների համար ավտոմեքենաների պարտադիր ապահովագրման գործընթացը հավելյալ ֆինանսական մեծ բեռ է, որն այս պայմաններում ցածր եկամուտ ունեցողների համար վաղ է եւ անթույլատրելի: Օրենքներն ընդունվում են՝ նպատակ ունենալով սպասարկելու հասարակական շահը եւ ապահովել սոցիալական պաշտպանվածություն, սակայն ավտոմեքենաների պարտադիր ապահովագրությունը ողղված է ապահովագրության ոլորտում մենաշնորհ եւ գերիշխող դեր ստեղծելու հեռանկարի:

Հասարակության ներսում առկա գործընթացներն արդեն իսկ փաստում են, որ քաղաքացիներն ունեն սպասողական դիրքորոշում, քանի որ ի վիճակի չեն վճարել եւ կյանքի կոչել օրինագծի դրույթներից բխող պարտավորությունները: Այն մի կողմից բերում է ֆինանսական հավելյալ չնախատեսված ծախսերի, մյուս կողմից՝ օրինագիծը չի սպասարկում հասարակական եւ հանրային շահերը, այլ, նպատակաուղված ի հաշիվ օրենքի պարտադրանքի, ապահովում է ֆինանսական շուկայի սահմանափակ թվով տնտեսվարողների գերշահույթները:

Օրենքը չի բխում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, որով ամրագրված են Հայաստանի Հանրապետության տարածքում իրավական կարգավորման սկզբունքները եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրության իրավական հիմքը: Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության եւ գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որեւէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա, ինչպես նաեւ՝ քաղաքացիները եւ իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով եւ ի շահ իրենց: Անհրաժեշտ է սահմանադրորեն ամրագրված դրույթը, ըստ որի ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքների եւ ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաեւ՝ պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի, տուրքերի եւ այլ պարտադիր վճարների տեսակները, չափը, վճարման կարգը սահմանվում են բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով: